

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ և  
ՀԻՍՈՒՍԸ ԻՍԼԱՄԻ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

[Հայերեն - Armenian – أرمني ]

**ԴԱՐ Արդ Առ-Ռահմեն**

**Թարգմանությունը:**  
**EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)**  
& Աննա Ռ. Հակոբ  
**Ստուգող հանձնաժողով:**  
Արու Առամ

2014 - 1436

**IslamHouse**.com

﴿ عيسى عليه السلام والنصرانية من ﴾

﴿ وجهة نظر الإسلام ﴾

باللغة الأرمينية

دار عبد الرحمن

ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

2014 - 1436

IslamHouse.com

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՍՈՒՍԸ ԻՍԼԱՄԻ  
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՄԻ ԾՆՆՈՒՆԴԸ

ՄԱՐԻԱՄԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՍՈՒՄԻ ԾՆՆՈՒՆԴԸ

ՀԻՍՈՒՄԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՍՈՒՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ / ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

ՀԻՍՈՒՄԻ ԲՆՈՒՅԹԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ՆԱԽՈՐԴ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆԵՐԻՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՐՈՆ

ՎԵՐԱԴԱՐՉ, ԱՅԼ ՈՉ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Մարգարեներ եկել են ամեն ազգին և ցեղին, որպեսզի աջակցեն, Ալլահին հավատալու մարդու բնածին հավատքին և Նրան երկրպագելու գիտակցական ցանկությանը : Չնայած որ, Մարգարե Մուհամեդը ծնվել է Արաբական Թերադում, Նա եկել է ամբողջ մարդկությանը, տալու Ալլահի Ուղերձը, ինչպես արաբներին, այնպես էլ ոչ արաբներին : Այդ,նույն ուղերձն էր, որ Ալլահը ուղարկել էր նախորդ մարգարեներին, որը ներկայացնում է Իր կողմից հաստատված ապրելակերպ, որին պետք է հետևեն մարդիկ իրենց աշխարհիկ կյանքում: Իսլամի ուղերձը փոխանցվել է գրքի, Ղուրանի և Մարգարեյի կենդանի օրինակի տեսքով: Դրանք հանդիսանում են կյանքի ապրելակերպի երկու հիմնական ձևեր, որոնք ընդունելի են և մտքին և սրտին և որոնց իմաստը գերազանցում է «կրոնի» ավանդական հասկացությանը :

Դար Աբդուլ Ռահմանը հավակնոտ ծրագիր է, որի նպատակն է ներկայացնել Իսլամական սկզբունքները և արժեքները, որոնք ծառայում են Իսլամի տարածմանը : Մեր նպատակն է օգնել և մուսուլմաններին, և ոչ մուսուլմաններին հասկանալ կրոնը,որը պաշտպան է կանգնում միասնությանը, հանդուրժողականությանը և խաղաղությանը, այսինքն Իսլամին: [info@darar.com](mailto:info@darar.com)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեկ այլ անձի հետ գիտակից հարաբերություն կառուցելու համար, անհրաժեշտ է իմանալ նրա կարծիքը քո մասին : Մուսուլմանի համար դժվար է իմանալ, թե ինչ կարծիք ունի Քրիստոնյան, Իսլամի մասին: Սակայն, Քրիստոնյային հեշտ է իմանալ մուսուլմանի կարծիքը Քրիստոնեության մասին, քանի որ նրան անհրաժեշտ է միայն անբաղաճալ Ղուրանին, Մուսուլմանների կրոնական ուսմունքի հիմնական աղբյուրին :

Այս իսկ նպատակով է, որ պատրաստվել է այս գիրքը: Ստորև, նշվում են տարբերակներ Սուրբ Ղուրանից, որոնք վերաբերում են Հիսուսին և Քրիստոնեությանը :

## ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴ

Իրավմամբ, « աշխարհների վրա Ալլահը ընտրել է Ադամին և Նոյին և Աբրահամի ընտանիքին և Ամրանի ընտանիքին, ովքեր մեկը մյուսի ժառանգներն են: Եվ Ալլահը Ամենատեսն ու Ամենագիտակն է: (Հիշատակիր), Օվ Մուհամեդ, երբ Ամրանի կինը ասաց. «Իմ Տեր, իրավմամբ, ես խոստանում եմ նվիրել Քեզ ծառայելուն այն, ինչ իմ արգանդում է, այսպիսով, ընդունիր այս ինձանից: Իրոք, Դու Ամենալսողն ու Ամենագիտակն ես:» Սակայն, երբ նա ծնունդ տվեց

նրան, նա ասաց. «Իմ, Տեր, ես աղջիկ եմ ծնել:» Եվ Ալլահը քաջատեղյակ էր, թե ինչ էր նա ծնել և տղան նման չէ աղջկա: Ես անվանեցի նրան Մարիամ և խնդրում եմ Քեզ պաշտպանել նրան և նրա ժառանգներին սատանայից, որը լքված էր Ալլահի գրասարտությունից:» Այսպիսով, Աստված ընդունեց նրան լավագույն ձևով, մեծացրեց պատշաճ կերպով և հանաձնեց նրան Չաքարիայի հոգացությանը: Ամեն անգամ, երբ Չաքարիան մտնում էր նրա աղոթատեղին, նա գտնում էր պարեն նրա հետ: Նա ասաց, «Օվ, Մարիամ, որտեղից է այս գալիս քեզ:» Նա պատասխանեց, «Ալլահից: Իրոք, Ալլահը պարգևում է առանց հաշվի նրան, ում Նա է ցանկանում :» (Այիլե Իմրան 33-37)

## ՄԱՐԻԱՄԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Եվ, (հիշատակիր), երբ հրեշտակները ասացին. «Օվ, Մարիամ, իրոք, Ալլահը ընտրեց քեզ և անաղարտ պահեց և վեր դասեց քեզ աշխարհների բոլոր կանացից: Օվ, Մարիամ, եղիր անսահման նվիրված քո Տիրոջը և տարածվիր և խոնարհվիր գետին նրանց հետ, ովքեր խոնարհվում են աղոթքում:» (Այիլե Իմրան 42:43)

«Եվ, Մարիամի, Ամրանի դասեր, օրինակով, ով պահպանեց իր ողջ ախտիությունը, Մենք փչեցինք Մեր հրեշտակի, Գաբրիելի միջոցով, նրա զգեստի

բացվածքից, և նա հավատաց Տիրոջ խոսքերին և Նրա Գրեքին և ամենանվիրյալ հնազանդներից էր:» (Աս-Տահրիիմ:12 )

«Եվ (հիշատակիր) նրան,ով պահպանեց իր ողջախոհությունը,այսինքն, Մարիամին, այսպիսով Մենք Մեր հրեշտակի, Գաբրիելի միջոցով փչեցինք նրա հագուստի մեջ և Դարձրեցինք նրան և նրա որդուն նշան աշխարհներին :» (Ալ- Անբիյա:91)

«Եվ Մենք դրածրեցին Մարիամի որդուն և նրա մորը նշան և ապաստանեցինք նրանց բլուրի գողտրիկ մասում, որտեղ ջուր էր հոսում :» (Ալ- Մումինուն :50)

## ՀԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԸ

(Եվ, հիշատակիր), երբ հրեշտակներն ասացին.« Օվ, Մարիամ, իրոք, Ալլահը քեզ ավետիս է տվել Իրենից առաջին խոսքի, ում անունը կլինի Մեսսիա, Հիսուս, Մարիամի<sup>1</sup> որդի, ով կլինի հարգված այս և Հետագա Կյանքում և կլինի Ալլահին մոտ գտնվողներից:Նա օրորոցում կխոսի մարդկանց հետ և հասուն հասակում կլինի առաքինիներից մեկը :» Մարիամն ասաց. «Իմ, Տեր, ինչպե՞ս կարող եմ ես զավակ ունենալ,երբ ոչ մի

---

<sup>1</sup> Վերաբերում է Մարգարե Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն), ով բողոմնավորվել է Ալլահի միայն մեկ հրամանով- «Եղիր» խոսքով :

տղամարդ ինձ չի մոտեցել:» Հրեշտակն ասաց. «Այսպիսին է Ալլահը,Նա արարում է, ինչ Նա է ցանկանում :Երբ նա որոշում է որևէ բան, Նա միայն ասում է « Եղիբ » և այն լինում է : Եվ Նա կտվորեցնի նրան զիր և իմաստություն<sup>1</sup>, Թորա և Ավետարան և կդարձնի նրան Իսրայելի Չավակների Առաքյալ, ով կասի . «Իրավամբ, ես եկել եմ ձեզ ձեր Տիրոջ նշանով : Ես կավին կտամ թոջնի ձև,կփչեմ նրա վրա և այն Ալլահի թույլտվությամբ կդառնա թոշուն :Եվ,ես կբուժեմ բնածին կույրին և բորոտին և Ալլահի թույլտվությամբ ես կվերակենդանացնեմ մահացածին:Եվ,ես կտեղեկացնեմ ձեզ,թե ինչով եք դուք սնվում և ինչ պաշար ունեք ձեր տներում : Իրավամբ, այն նշան է ձեզ,եթե դուք հավատացյալ եք: Եվ, ես եկել եմ հաստատելու ինչ ինձանից առաջ էր Թորայում և թույլատրելի դարձնել որոշ բաներ, որոնք արգելված էին ձեզ:Եվ, ես եկել եմ ձեզ, ձեր Տիրոջ նշանով, այսպիսով, վախեցեք Ալլահից և հնազանդվեք ինձ: Իրավամբ, Ալլահը իմ և ձեր Տերն է,այսպիսով, երկրպագեք Նրան: Այդ է ճշմարիտ ուղին » (Այիլե Իմրան :45-51)

«Եվ հիշատակիր,(ով Մուհամեդ ),Գրքում Մարիամի պատմությունը,երբ նա հեռացավ իր ընտանիքից մի վայր,որը գտնվում էր արևելքում:Եվ նա առանձնացավ նրանցից ծածկոցով :Այնուհետ,Մենք ուղարկեցինք

---

<sup>1</sup> Մարգարեյի ուսմունքը.



նրան Մեր Հրեշտակին, այսինքն, Գաբրիելին և նա ներկայացավ Մարիամին, որպես առնական տղամարդ:Նա ասաց. «Իրոք, ես Ամենագթասարտից ապաստան եմ խնդրում քեզանից, այսպիսով, թող ինձ, եթե դու վախենում ես Ալլահից:» Նա ասաց. «Ես միայն քո Տիրոջ առաքյալն եմ, ավետիս տալու քեզ անաղարտ տղայի, այսինքն որդու:» Մարիամն ասաց. «Ինչպե՞ս ես կարող եմ տղա զավակ ունենալ, մինչ ոչ մի տղամարդ ինձ չի մոտեցել և ես չեմ պատվազրկվել:» Նա ասաց. «Այսպես կլինի, քո Տերն ասաց. «հեշտ է Ինձ համար և Մենք կդարձնենք նրան նշան մարդկանց և գուր Մեր կողմից : Եվ այս արդեն որոշված խնդիր է:» Այսպիսով նա բեղմնավորվեց և հեռացավ նրա հետ հեռավոր վայր: Ծննդաբերության ցավերը հասցրեցին նրան արմավենու մոտ:Նա ասաց. «Օհ, ես կցանկանայի մահանալ սրանից առաջ և լինել անգիտակ և մոռացված:» Սակայն նա<sup>1</sup> կանչեց նրան ներքևից. «Մի տխրիր, քո Տերը տվել է գետակ քեզանից ներքև : Եվ թափահարիր դեպի քեզ արմավենու ճյուղը, կընկնի քեզ մոտ հասած, թարմ արմավ : Այսպիսով, կեր և ըմպիր և գոհացիր: Եվ, եթե դու տեսնես մարդկանցից որևէ մեկին, ասա. «Իրոք, ես Ամենագթասարտին ժուժկալության երդում եմ տվել, այսպիսով, ես այսօր չեմ խոսի ոչ մի մարդու հետ:» Այնուհետ, նա գրկած

---

<sup>1</sup> Գիտնականների մեջ կան տարբեր կարծիքներ կապված նրա հետ, թե «Նա» վերաբերում է երեխային, թե հրեշտակին:

բերեց նրան իր մարդկանց :Նրանք ասացին. «Օվ, Մարիամ, դու անշուշտ աննախադեպ բան ես արել :Օվ, Ահարոնի քույր, քո հայրը չարիքի մարդ չէր, ոչ էլ քո մայրն էր անպարկեշտ:» Այսպիսով, նա մատնանշեց նրան:Նրանք ասացին.« Ինչպե՞ս մենք կարող ենք խոսել մեկի հետ,ով օրորոցի երեխա է:» Հիսուսն ասաց. «Իրոք, ես Ալլահի ծառան եմ : Նա տվել է ինձ Գիր և դարձրել է ինձ Մարգարե : Եվ, Նա օրհնել է ինձ որտեղ էլ, որ ես լինեմ և պատվիրել է ինձ աղոթել և զաքյաթ տալ,քանի դեռ ես կենդանի եմ :Եվ դարձրել է ինձ հարգալից դեպի իմ մայրը և չի դարձրել ինձ թշվառ բռնակալ : Խաղաղություն է ինձ այն օրը,երբ ես ծնվել եմ և այն օրը,երբ ես կմահանամ և այն օրը,երբ հարություն կառնեմ :» Այս է Հիսուսը,Մարիամի որդին, ճշմարտության խոսքը, որի մասին նրանք վիճում են : Վայել չէ Ալլահին զավակ ունենալ :Բարձրյալ է Նա <sup>1</sup>: Երբ,Նա որոշում է որևէ բան, Նա միայն ասում է դրան «Եղիբ» և այն լինում է :Հիսուսն ասաց. «Եվ,իրոք,Ալլահը իմ Տերն ու քո Տերն է, այսպիսով, երկրպագիր Նրան: Այդ է ուղիղ ճանապարհը :» (Մարիամ :16-36)

## ՀԻՍՈՒՄԻ ՄԵԾՈՌԻԹՅՈՒՆԸ

---

<sup>1</sup> Այսինքն, Նա հեռու է այսպիսի կարիքներից :

«Այն Օրը, երբ Ալլահը կասի. «Օվ, Հիսուս, Մարիամի որդի, հիշիր Իմ բարիքը քեզ և քո մորը, երբ ես աջակցեցի ձեզ Անադարտ Հոգով, այսինքն, Գաբրիել հրեշտակով և դու խոսեցիր մարդկանց հետ օրորոցում և հասուն տարիքում և հիշիր, երբ Ես սովորեցրեցի քեզ գիր և իմաստություն և Թորա և Ավետարան և Իմ թույլտվությամբ դու պատրաստեցիր կավե թոջուն և Իմ թույլտվությամբ դու բուժեցիր բնածին կույրին և բորոտին և Իմ թույլտվությամբ դու հարություն սվեցիր մահացածին և Ես պաշտպանեցի քեզ Իսրայելի Չավակներից, ովքեր ցանկանում էին սպանել քեզ, երբ դու եկար նրանց մոտ ակնհայտ ապացույցներով և նրանք, ովքեր չհավատացին ասացին. «Այս ոչինչ է, քան ակնհայտ կախարդանք:» Եվ, հիշիր, երբ ես ներշնչեցի աշակերտներին, «Հավատացեք Ինձ և Իմ մարգարեյին, այսինքն, Հիսուսին:» Նրանք ասացին. «Մենք հավատացել ենք, այսպիսով, վկայեք, որ իրոք, մենք մուսուլմաններ ենք, հնազանդվել ենք Ալլահին :» Եվ հիշիր, երբ աշակերտները ասացին. «Օվ Հիսուս, Մարիամի Որդի, կարող է արդյո՞ք քո Տերը <sup>1</sup>երկնքից ուղարկել մեզ սննդով լի սեղան: Հիսուսն ասաց. «Վախեցեք Ալլահից, եթե դուք հավատացյալներ եք:» Նրանք ասացին, «Մենք ցանկանում ենք սնվել դրանից և թող մեր սրտերը համոզվեն և իմանան, որ դու ազնիվ ես մեզ հետ և լինել դրա վկաներից :» Ասաց Հիսուսը,

---

<sup>1</sup> Այսինքն, կտա արդյոք Ալլահը համաձայնություն, Նրա հնարավորությունները անսահման են

Մարիամի որդին, «Օվ, Ալլահ, մեր Տեր, ուղարկիր մեզ երկնքից սեղան, լի սննդով, որպեսզի Քեզանից լինի տոն և նշան մեր համար, առաջինից մինչ վերջինը : Եվ ապահովիր մեզ և Դու լավագույն ապահովողն ես:» Ալլահն ասաց, « Իրավամար, Ես կուղարկեմ ձեզ համար ներքև, սակայն դրանից հետո ձեզանից նա, ով չհավատաց, Ես իրոք, կպատժեմ նրան պատժով, որով Ես չեմ պատժել որևէ մեկին աշխարհներում :» (Ալ-Մայիդա 110-115)

«Եվ, Մենք, իրոք տվել ենք Մովսեսին Գիր, Թորա և նրանից հետո մարգարեներ ենք ուղարկել : Եվ, Մենք տվել ենք Հիսուսին, Մարիամի որդուն, ակնհայտ ապացույցներ և աջակցել ենք նրան Անաղարտ Հոգով, այսինքն Գաբրիել հրեշտակով: Սակայն, մի թե այնպես չէր, որ ամեն անգամ, երբ մարգարեներում էր ձեզ, օվ, Իսրայելի զավակներ, այն, ինչ ձեր սրտով չէր դուք ցուցաբերում էիք ամբարտավանություն: Ոմանց մերժում էիք, իսկ մյուսներին սպանում:» (Ալ-Բակարա :87)

«Այսպիսին են մարգարեները : Մենք նրանցից ոմանց գերադասեցինք մյուսներից: Նրանց մեջ կային այնպիսիներ, որոնց հետ Ալլահը խոսեց և ոմանց Նաբարձրացրեց աստիճանում: Եվ Մենք տվեցինք Հիսուսին, Մարիամի որդուն, ակնհայտ ապացույցներ և Մենք աջակցեցինք նրան Անաղարտ Ոգով, այսինքն, Գաբրիելով : Եթե Ալլահը ցանկանար, ապա նրան հետևող սերունդները չէին մարտնչի միմյանց դեմ այն

բանից հետո, երբ նրանց հայտնվեց ակնհայտ նշան : Սակայն նրանք ընկան տարաձայնության մեջ և նրանցից ոմանք հավատացին և ոմանք էլ ոչ: Եվ, եթե Ալլահը ցանկանար, նրանք չէին մարտնչի միմյանց դեմ, սակայն Ալլահը անում է այն, ինչ Նա մտադրվել է:» (Ալ-Բակարա :253)

«Եվ, Մենք ուղարկեցինք Հիսուսին, Մարիամի որդուն, հետևելու նրանց<sup>1</sup>, հաստատելու, այն, ինչ եկել էր նրանից առաջ Թորայում և Մենք տվեցինք նրան Ավետարան, որում կար ուղղորդություն և լույս և որը հաստատում էր այն, որ մինչ այդ կար Թորայում, որպես ուղղորդություն և ուսուցում առաքինիներին:» (Ալ-Մայիդա :46)

«Այնուհետ, Մենք ուղարկեցինք իրենց հետքերով Մեր առաքյալներին և ուղարկեցինք Հիսուսին, Մարիամի որդուն և տվեցինք նրան Ավետարան : Եվ Մենք դրեցինք նրան հետևողների սրտերում գուրթ և կարեկցանք, իսկ վանականությունը նրանք նորամուծել են: Մենք չէինք տվել այդ նրանց, սակայն նրանք այդպես վարվեցին, որպեսզի գտնեն Ալլահի գոհունակությունը: Սակայն նրանք չհետևեցին դրան պատշաճ կերպով: Այսպիսով, նրանց, ովքեր հավատացին, Մենք տվեցինք իրենց պարգևը, սակայն նրանցից շատերը անհնազանդ էին : » (Ալ- Հադիդ:27)

---

<sup>1</sup> Այսինքն, հետևելով Իսրայելի Ջավակաների մարգարեների սովորույթներին :

«Եվ, հիշիր, երբ Հիսուսը, Մարիամի որդին, ասաց. «Օվ, Իսրայելի զավակներ, իրավամար Ես Ալլահի Մարգարեն եմ հաստատելու ձեզ, ինչ եկել է ինձանից առաջ Թորայում և ավետիս տալու ինձանից հետո եկող մարգարեյի մասին, ում անունն է Ահմեդ:»<sup>1</sup> Սակայն, երբ նա եկավ նրանց մոտ ակնհայտ վկայությամբ, նրանք ասացին. «Մա ակնհայտ կախարդանք է :»<sup>2</sup> (Աս- Սաֆֆ :6)

Եվ, երբ Մարիամի որդուն ներկայացրեցին, որպես օրինակ<sup>3</sup>, քո ժողովուրդը անմիջապես բարձրաձայն ծիծաղեց: Եվ նրանք ասացին. «Արդյո՞ք մեր աստվածներն են լավը, թե նա:»<sup>4</sup> Նրանք ներկայացնում են այն, բացառապես համեմատելու և վիճաբանելու համար: Սակայն, փաստորեն, նրանք մարդիկ են, ովքեր հակված են վիճարկելու : Նա, այսինքն, Հիսուսը միայն ծառա էր, որին մենք շնորհ էինք պարգևել և Մենք նրան օրինակ էինք դարձրել Իսրայելի Ջավակների համար: Եվ, եթե Մենք ցանկանայինք, Մենք կարող էինք

---

<sup>1</sup> Մարգարե Մուհամեդի մեկ այլ անունը.

<sup>2</sup> Այսինքն, խարդախություն կամ խաբեություն.

<sup>3</sup> Ալլահի արարածներից, ում երկրպագում են Նրա հետ միասին.

<sup>4</sup> Նկատի ունեն, որ նրանք բոլորը պետք է լինեն միանման:

երկիրը փոխարինել հրեշտակներով, ովքեր կարող էին դառնալ ձեր փախանորդները <sup>1</sup>:

«Եվ, իրավամար, նա, Հիսուսը կլինի ժամի գիտության նշանը, այսպիսով մի կասկածեք դրանում և հետևեք Ինձ<sup>2</sup>: Սա է ճշմարիտ ուղղին: Եվ, երբեք թույլ մի տվեք, որ Սատանան կանխի ձեզ: Իրավամար, ձեզ համար նա ակնհայտ թնամի է: Եվ, երբ Հիսուսը բերեց ակնհայտ ապացույցներ, նա ասաց. «Ես եկել եմ ձեզ մոտ իմաստությամբ, այսինքն մարգարեությամբ և պարզաբանելու ձեզ որոշ բաներ, որոնց դուք տարբերություն եք դնում, այսպիսով վախեցեք Ալլահից և հնազանդվեք ինձ: Իրավամար, Ալլահը իմ և ձեր Տերն է, այսպիսով երկրպագեք Նրան: Սա է ճշմարիտ ուղղին:» Սակայն, աղանդները տարանջատվեցին միմյանցից, այսպիսով անեծք նրանց, ովքեր անարդար են գործել, տանջալից Օրվա պատժից:» (Ազ-Չուփհրուֆ 57-65)

## ՀԻՍՈՒՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ / ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

«Սակայն, երբ Հիսուսը զգաց նրանց անվաստահությունը և անհավատությունը, նա ասաց. «Ովքե՞ր են իմ աջակիցները հանուն Ալլահի:»

<sup>1</sup> Կամ՝ Գերազանցեն ձեզ՝

<sup>2</sup> Այսինքն, հետևել ուղղորդությանը և Ալլահի պատվիրաններին:

Աշակերտները ասացին. «Մենք աջակիցներ ենք հանուն Ալլահի: Մենք հավատացել ենք Ալլահին և վկայել ենք, որ մենք մուսուլմաններ ենք, հնազանդվել ենք Նրան: Մեր Տեր, մենք հավատացել ենք Քո լուսաբանմանը և հետևել ենք մարգարեյին, Հիսուսին, այսպիսով, գրառիր մեզ ճշմարտության վկաների շարքերում:» Եվ, նրանք, անհավատները ծրագրեցին, սակայն Ալլահը որոշեց: Եվ, Ալլահը լավագույն ծրագրողն է: Հիշիր, երբ Ալլահն ասաց. «Օվ, Հիսուս, իրավամար, ես կվերցնեմ քեզ և կհամբարձեմ Ինձ մոտ և կազատեմ քեզ, նրանցից, ովքեր չեն հավատացել և նրանց, ովքեր հետևել են քեզ, ենթարկվելու Միայն Ալլահին. Ես կգերադասեմ անհավատներից մինչ Հարության Օրը: Այնուհետ Ինձ է քո վերադարձը և Ես կդատեմ ձեզ այն բանում, որում դուք տարաձայնություններ եք ունեցել: Եվ, ինչ վերաբերում է նրանց, ովքեր չեն հավատացել, Ես կպատժեմ նրանց դաժան պատժով այս և Հանդերձյալ աշխարհներում, և նրանց ոչ ոք չի օգնի:՝՝Սակայն նրանց, ովքեր հավատացել են և առաքինի արարքներ են արել, Նա կտա իրենց լիարժեք պարգևը և Ալլահը չի սիրում անօրեններին: Այս է, ինչ Մենք ընթերցում ենք քեզ, օվ Մուհամեդ, Մեր տարբերակներում և ճշգրիտ ու իմաստուն ուղերձում, Ղուրանում: Իրավամար, Ալլահի համար<sup>1</sup> Հիսուսի օրինակը, նման է Ադամի օրինակին: Նա արարեց նրան փռշույց, այնուհետ Նա ասաց նրան «

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է նրա արարմանը:



Եղիբ » և նա եղավ :Ճշմարտությունը ձեր Տիրոջից է, այսպիսով, մի եղեք կասկածողներից:» (Այիլե Իմրան: 52-60)

«Եվ, Մենք անիծեցինք նրանց<sup>1</sup>, հավատարմագիրը խախտելու և Ալլահի նշաններին չհավատալու համար, ինչպես նաև առանց իրավունքի մարգարեներին սպանելու և ասելու համար . «Մեր սրտերը ծածկված են այսինքն, դրոշմված են ընդդեմ մեջբերումների: Ավելի շուտ Ալլահն է դրոշմել նրանց, իրենց անհավատության համար, այսպիսով նրանք չեն հավատում, բացառությամբ քչերի: <sup>2</sup>Եվ Մենք անիծել ենք նրանց, իրենց անհավատության և Մարիամի դեմ մեծ զրպարտության<sup>3</sup> համար: Եվ այն բանի, որ նրանք ասել են. « Իրավմամբ, մենք սպանել ենք Մեսսիային, Հիսուսին, Մարիամի որդուն, Ալլահի մարգարեյին:» Եվ նրանք չեն սպանել նրան, ոչ էլ խաչել են, մեկ ուրիշն էր նրան նման: Եվ, իրավմամբ, ովքեր տարբերում են այդ, կասկածում են: Նրանք ոչինչ չունեն բացառությամբ ենթադրությունների: Եվ, անկասկած նրանք չեն սպանել նրան: Հակառակը, Ալլահը համբարձել է նրան Իր մոտ

---

<sup>1</sup> Մեկ այլ մեջբերում է. "Եվ Մենք դարձրել ենք որոշակի տեսակի ուտելիքներ անթույլատրելի նրանց համար": Այս հիմնված է տարբերակ 160-ի վրա:

<sup>2</sup> Կամ "բացի չնչին հավատքից:"

<sup>3</sup> Երբ նրանք մեղադրեցին նրան անբարոյականության մեջ:

:Եվ Բարձրյալ է Ալլահը Հզորությամբ և Իմաստությամբ  
:» (Ան- Նիսա:155-158 )

### ՀԻՍՈՒՍԻ ԲՆՈՒՅԹԸ, ԷՌԻԹՅՈՒՆԸ

Եվ համոզված եղեք այն Օրվա մեջ,երբ Ալլահը կասի.  
««Օվ, Հիսուս,Մարիամի Որդի,արդյո՞ք դու ասել ես մարդկանց. «Բացի Ալլահից, վերցրեք ինձ և իմ մորը որպես աստվածներ:» Նա կասի. «Բարձրյալ ես Դու: Ես չէի կարող ասել այն, ինչի իրավունքը չունեյի:Եթե ես ասեյի այդ,Դու կիմանայիր:Դու գիտես,թե ինչ է իմ ներսում և ես չգիտեմ, թե ինչ է Քո ներսում:Իրավմամբ,Դու ես անտեսանելիի Գիտակը:Ես ոչինչ չեմ ասել նրանց, բացառությամբ, նրա, ինչ Դու պատվիրել ես ինձ. Այն է երկրպագեք Ալլահին, իմ և ձեր Տիրոջը:Եվ, ես վկա էի նրանց,երբ նրանց մեջ էի, սակայն, երբ Դու ինձ տարար, Դու դարձար Դիտորդ նրանց և Դու Ամենի Վկան ես:Եթե Դու պատժես նրանց, իրոք, նրանք Քո ծառաներն են, սակայն, եթե Դու ներես նրանց, իրոք,Դու Նա ես, Ով Բարձրյալն է Հզորությամբ և Իմաստությամբ :Ալլահը կասի. «Սա այն Օրն է, երբ ճշմարտախոսները կշահեն իրենց արդարությունից :» Նրանց համար են այգիները,Դրախտում, որի ստորոտում գետեր են հոսում,այնտեղ նրանք կբնակվեն հավերժ,Ալլահը կլինի գոհ նրանցից և նրանք Ալլահից :Այս մեծ հաջողությունն է :Ալլահին է պատկանում երկինքների և երկրի և այնտեղ գտնվող ամենի

իշխանությունը:Եվ Նա ամենի իրավասուն է:» (Ալ-Մայիդա :116-120 )

«Օվ, Գրերի Մարդիկ, մի գործեք ծայրահեղորեն ձեր կրոնում<sup>1</sup> և Ալլահի մասին ասեք միայն ճշմարտությունը:Մեսսիան, Հիսուսը,Մարիամի որդին,Ալլահի մարգարեն էր և Նրա խոսքը,որը Նա ուղղեց Մարիամին ոգով, Իր հրամանով: Այսպիսով, հավատացեք Ալլահին և Նրա մարգարեններին :Եվ մի ասեք .“ Երեք” Դադարեք այդ,այդպես ավելի լավ կլինի ձեզ:Իրոք, Ալլահը միայն մեկ Աստված է : Բարձրյալ է Նա որդի ունենալուց:Նրան է պատկանում երկինքներում և երկրում գտնվող ամեն ինչ :Եվ բավարար է Ալլահը, որպես գործերի տնօրինող:Երբեք, ոչ Մեսսիան,ոչ էլ հրեշտակները չեն համարի նվաստացուցիչ, լինելու Ալլահի ծառաները:Եվ,բոլոր նրանց, ովքեր կհամարեն Նրա երկրպագումը նվաստացուցիչ և կլինեն ամբարտավան, Նա կհավաքի Իր մոտ:Իսկ, ինչ վերաբերում է նրանց, ովքեր հավատում և բարիք են գործում,Նա կտա նրանց լիարժեք պարգևը և կշնորհի ավելին,Իր առատաձեռնությունից:Սակայն նրանք, ովքեր մերժել և ամբարտավան են եղել,Նա կպատժի ցավոտ պատժով և

---

<sup>1</sup> Մեկ այլ իմաստն է.“Եվ նրանք չսպանեցին նրան առանց համոզվելու, այսինքն, նրանք մեկ ուրիշին սպանեցին,ենթադրելով, որ նա Հիսուսն է (Խ.Ա.Ո.Ն):”

նրանք բացի Ալլահից չեն գտնի որևէ օգնական կամ պաշտպան:» (Ան- Նիսա:171-173)

Անկասկած, նրանք, ովքեր ասել են, որ Ալլահը Քրիստոսն է, Մարիամի որդին, չեն հավատացել: Ասա. «Այդ դեպքում, ո՞վ կարող է կանխել Ալլահին ընդհանրապես, եթե Նա մտադրվեր կործանել Քրիստոսին, Մարիամի որդուն, կամ նրա մորը, կամ բոլորին երկրի վրա:» Եվ Ալլահին է պատկանում երկինքների և երկրի և նրանց միջև գտնվող ամենի իշխանությունը: Նա արարում է, ինչ Նա է ցանկանում և Ալլահը Ամեն բանի իրավասուն է:» (Ալ- Մայիդահ :17 )

Նրանք անկասկած չեն հավատացել, ովքեր ասել են. «Ալլահը Մեսսիան է, Մարիամի որդին», մինչ Մեսսիան ասել է, «Օվ, Իսրայելի զավակներ, երկրպագեք Ալլահին, իմ և ձեր Տիրոջը:» Իրավամար, նա, ով Ալլահին հավասար զուգընկեր է տալիս, ապաստանն է Կրակը և Ալլահը արգելել է Դրախտը: Եվ անօրեններին չկա որևէ օգնական: Նրանք, ովքեր ասում են «Ալլահը երեքից երրորդն է»<sup>1</sup> անկասկած չեն հավատացել: Չկա աստված, բացի մեկ Աստծոց: Եվ, եթե նրանք չդադարեն ասել այն, ինչ ասում են, ապա նրանց միջի անհավատները կվշտանան դաժան պատժից: Արդյո՞ք նրանք չեն մեղանչի Ալլահին և չեն փնտրի Նրա

<sup>1</sup> Այսպիսի աստվածայի հատկանիշների ածականներ, որոնք տրվում են Ալլահի որոակի արարածներին, կամ նրանց նկատմամբ չափազանց մեծ հարգանքը:

թողությունը: Եվ Ալլահը Ներող և Գթասիրտ է: Մեսսիան, Մարիամի որդին մարգարե էր, որին նախորդել էին ուրիշները: Եվ նրա մայրը ճշմարտության կրողն էր: Նրանք երկուսն էլ սնվում <sup>1</sup> էին: Տես, թե ինչպես ենք Մենք ակնհայտ դաժրել նշանները, և տես, թե ինչպես են դրանք աղավաղել: Ասա. «Մի թե դուք կերկրպագեք Ալլահից բացի մեկին, որը չի կարող ձեզ վնասել կամ օգնել, մինչդեռ Ալլահն է Ամենալսողն ու Գիտակը :» (Ալ- Մայիդահ 72-76)

## **ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ՆԱԽՈՐԴ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆԵՐԻՆ.**

Մարգարեների կրոնը մեկն է, իսկ նրանց օրենքները տարբեր: Մուսուլմանը, Մուհամեդի հետևորդը, չի կարող համարվել մուսուլման, եթե չհավատա բոլոր մարգարեներին, ներառելով Հիսուսին և նրանց գրերին:

Ալլահն ասաց. «Օվ, Մարգարեներ, սնվեք բարիքով և աշխատեք առաքինի, իրոք, Ես Գիտակ եմ այն բանին, թե ինչ էք դուք անում : Եվ, իրավամար, այս, ձեր կրոնը

---

<sup>1</sup>Նրանք սննդի կարիք ունեյին, որը ապացուցում էր, որ նրանք Ալլահի արարածներն էին, այլ ոչ թե աստվածներ:

մեկն<sup>1</sup> է և Ես ձեր Տերն եմ, այսպիսով վախեցեք Ինձանից: Մականյն նրանք, այսինքն մարդիկ, բաժանեցին միմյանց միջև իրենց կրոնը բաժինների, այսինքն, աղանդների, և յուրաքանչյուրը ուրախանում է նրանով, ինչ ունի<sup>2</sup>: (Ալ- Մումինուն:51:53)

«Իրավամբ, ձեր այս կրոնը<sup>3</sup>, մեկն է և Ես ձեր Տերն եմ, այսպիսով երկրպագեք Ինձ: Եվ այնուամենայնիվ, նրանք բաժանեցին այն, այսինքն, իրենց կրոնը, միմյանց միջև<sup>4</sup>, սակայն Բոլորը կվարադառնան Մեզ: »(Ալ- Անբիյա:92-93)

Ասա, օվ հավատացյալներ. «Մենք հավատացել ենք Ալլահին և այն բանին, ինչ լուսաբանվել է մեզ և ինչ լուսաբանվել է Աբրահամին և Իսմայելին և Իսահակին և Հակոբին և սերունդներին, Ալ-Ասրաթ, և ինչ տրվել է Մովսեսին և Հիսուսին և ինչ տրվել է մարգարեներին իրենց Տիրոջից: Մենք նրանց միջև ոչ մի տարբերություն չենք դնում և մենք մուսուլմաններ ենք, հնազանդ ենք Նրան :» (Ալ-Բակարա:136)

<sup>1</sup> Այսինքն, կյանքի հավաքական ձև, կամ ուղղություն, որին հետևում է համայնքը:

<sup>2</sup> Կամ հավատքներ, կարծիքներ, ավանդույթներ և այլն:

<sup>3</sup> Այսինքն, համայնքի կողմից ապրած կյանքի ձևը :

<sup>4</sup> Այսինքն, երեքի մեկ մասը, որը վերաբերում է երրորդության Քրիստոնեական հասկացությանը:

Ասա. «Մենք հավատացել ենք Ալլահին և այն բանին, ինչ լուսաբանվել է մեզ և ինչ լուսաբանվել է Աբրահամին, Իսմայելին, Իսահակին, Հակոբին և սերունդներին, Ալ- Ասբաթ<sup>1</sup> և այն բանին, ինչ տրվել է Մովսեսին և Հիսուսին և մարգարեներին, իրենց Տիրոջից: Մենք նրանց միջև որևէ տարբերություն չենք դնում և մենք մուսուլմաններ ենք, հնազանդ Նրան:»  
(Ալիլե Իմրան:84)

«Տվյալ Գիրքը ոչ մի կասկածի ենթակա չէ և հանդիսանում է ուղղորդություն նրանց, ովքեր վախենում են Ալլահից<sup>2</sup> և հավատում են անտեսանելիին, աղոթում<sup>3</sup> են և տալիս են այն բանից, ինչ Մենք<sup>4</sup> ենք նրանց պարզևել, ովքեր հավատում են օվ,

---

<sup>1</sup> Իսրայելի տասներկու ցեղերը, որոնք սերվել են Հակոբից:

<sup>2</sup> Բառացիորեն, նրանք, ովքեր աստվածավախ են, այսինքն, ով օժտված է առաքինությամբ, անաղարտությամբ, Ալլահի նկատմամբ սիրով և վախով և ով հոգ է տանում խուսափելու Նրա դժգոհությունից:

<sup>3</sup> Ճիշտ ժամանակին, որը համապատասխանում է որոշակի պայմաններին:

<sup>4</sup> Հարկ է նշել, որ Ալլահի, խստքերը իր մասին, որպես "Մենք", տարբերվում է "Ես" ձևից, շատ դուրանական տարբերակներում, որը արաբերենում հասկացվում է որպես մեծություն և իշխանություն: Իսկ "Ես"

**Մուհամեդ, քեզ և քո նախորդների լուսաբանմանը և համոզված են Հանդերձյալ Կյանքի գոյությանը:»** (Ալ-Բակարա:2-4)

Մարգարեն հավատաց այն բանին, ինչ լուսաբանվեց նրան իր Տիրոջից և այդպես էլ արեցին հավատացյալները:Նրանք բոլորը հավատացին Ալլահին,Նրա հրեշտակներին և Նրա գրեթին և Նրա մարգարեներին ասելով. «Մենք ոչ մի տարբերություն չենք դնում Նրա մարգարեների միջև:» Եվ նրանք ասում են, « **Մենք լսում և հնազանդվում ենք : Մենք փնտրում ենք Քո թողությունը,մեր Տեր, և Քոնն է մեր վերջին հանգրվանը:»** (Ալ-Բակարա:285)

Նա թույլատրելի դարձրեց կրոնի մեջ այն,ինչ պատվիրել էր Նոյին և այն,ինչ ներշնչել էր քեզ օվ, Մուհամեդ,լուսաբանման մեջ և այն,ինչ պատվիրել էր Աբրահամին, Մովսեսին և Հիսուսին,որպեսզի հաստատեն կրոն,այլ ոչ թե բաժանեն:Բազմաստվածների համար ծանր է այն, ինչին դու նրանց կոչում ես:Ալլահն ընտրում է Իր համար նրան, ում Նա է ցանկանում և առաջնորդում է նրան, ով դիմում Իրեն: (Ա2-Շուրա:13)

---

տարբերակը օգտագործվում է որոշ համապատասխան դեպքերում :



## ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿՐՈՆ

Ղուրանը պարզ բացատրում է, որ բոլոր մարգարեների կրոնը մեկն է: Այն ներառում է Աստծո միակ լինելու գաղափարը և բարոյական սկզբունքների միասնականությունը: Ղուրանը, միասնական կրոնը կոչում է Իսլամ և մուսուլմաններ նրանց, ովքեր հավատացել են: Այսպես, Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) հետևորդները հավատում են այս միասնական կրոնին և նրանք կոչվում են մուսուլմաններ, իսկ իրենց կրոնը Իսլամ:

Նրանք ասում են. «Դարձեք Հրեա կամ Քրիստոնյա, որպեսզի դուք առաջնորդվեք:» Ասա. **«Հակառակը, մենք հետևում ենք Աբրահամի կրոնին, որը շեղված չէ, և նա բազմաստված չէր:»** (Ալ-Բակարա:135)

**«Աբրահամը ոչ հրեա, ոչ էլ քրիստոնյա էր, նա հակված էր ճշմարտությանը, մուսուլման, հնագանդ Ալլահին: Նա բազմաստված<sup>1</sup> չէր:»** (Այիլե Իմրան:67)

**«Սակայն, երբ Հիսուսը նրանց կողմից անհավատություն զգաց, ասաց. «Ովքե՞ր են իմ աջակիցները հանուն Ալլահի:» Աշակերտները ասացին. «Մենք ենք աջակիցները հանուն Ալլահի: Մենք հավատացել ենք Ալլահին և վկայել ենք, որ մենք**

---

<sup>1</sup> Նրանք, ովքեր զուգընկեր են տալիս Ալլահին երկրպագության մեջ:

մուսուլմաններ ենք, հնազանդ Նրան:» (Ալիլե Իմրան:52 )

«Երբ նրա Տերը ասաց նրան. «Հնազանդվիր,» նա ասաց. «Ես հնազանդվել եմ Իսլամին<sup>1</sup>, աշխարհների Տիրոջը:» Եվ Աբրահամը պատվիրեց իր որդիներին անել նույնը, և այսպես արեց Հակոբը ասելով. «Օվ, իմ որդիներ, իրավամար, Ալլահը ձեզ համար ընտրել է այս կրոնը, այսպիսով մահացեք լինելով մուսուլմաններ:» Կամ արդյոք դուք վկա էիք, երբ մահը մոտեցավ Հակոբին, երբ նա ասաց իր որդիներին. «Դուք ու՞մ կերկրպագեք ինձանից հետո:» Նրանք ասացին, «մենք կերկրպագենք քո Աստծոն և քո հայրերի Աստծոն, Աբրահամի, Իսմայելի և Իսահակի Աստծոն, այսինքն, մեկ Աստծո: Եվ, մենք մուսուլմաններ ենք, հնազանդ ենք Նրան:» (Ալ-Բակարա:131-33)

Եվ, նրանք ասում են. «Ոչ ոք, բացի հրեաներից և Քրիստոնյաներից, չեն մտնի Դրախտ:» Այս ուղղակի նրանց երազանքն է: Ասա. «Ներկայացրեք ձեր ապացույցները, եթե դուք ճիտ եք:» Ոչ, հակառակը, ով իրեն ուղղում է դեպի Ալլահը, բարիք գործելով, կստանա

---

<sup>1</sup> "Իսլամ" բառը նշանակում է հնազանդվել Ալլահի կամքին: Այն կյանքի ձև է, որը պատվիրել է Ալլահը և սովորեցրել է բոլոր մարգարեներին, Ադամից, մինչ Մուհամեդ: Մուսուլմանը նա է, ով հնազանդվում է Ալլահին:

իր պարզեր իր Տիրոջ մոտ: Եվ ոչ մի վախ չի պատի նրան, ոչ էլ նա կտխրի:» (Ալ-Բակարա :111-112)

Հրեաները և քրիստոնյաները երբեք չեն խրախուսի քեզ, եթե դու չհետևես նրանց կրոնին: Ասա. «Իրավամբ, Ալլահի ուղղորդությունը միակն է:» Եթե դու ենթարկվես նրանց ցանկություններին այն բանից հետո, երբ գիտակցել ես, ապա Ալլահը չի լինի քո աջակիցը, կամ պատշպանը:» (Ալ-Բակարա:120)

Ասա. «Օվ, Գրերի մարդիկ: Եկեք համաձայնության գանք միմյանց հետ այն բանում, որ չենք երկրպագի ոչ ոքի բացառությամբ Ալլահի և որ զուգընկեր չենք տա Նրան և ոչ ոքի չենք ընդունի որպես տեր, Ալլահի՜ փոխարեն:» Սակայն, եթե նրանք շրջվեն, ապա ասա. «Վկայություն տվեք, որ մենք մուսուլմաններ ենք, հնազանդ ենք նրան:» (Այիլե Իմրան:64)

## ՎԵՐԱԴԱՐՁ, ԱՅԼ ՈՉ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Իրական քրիստոնյան կհասկանա, որ Իսլամը շատ մոտ է իր սրտին և մտքին, եթե նա գիտի իրական իսլամը, որը նկարագրված է Ղուրանում և եթե նրա ընկալումը հիմնված չէ տգետ մուսուլմանի ապրելաձևից: Այսպիսով, երբ նա ընդունի Իսլամ, նա չի

---

<sup>1</sup> Հնազանդություն ուրիշին և անհնազանդություն Ալլահին:

կրոնափախվի, այլ կվերադառնա: Վերջին հաշվով, Ղուրանը հայտնում է, որ Իսլամը բոլոր մարգարեների միասնական կրոնն է և որ դրա հետևորդները մուսուլմաններ են :

**«Օվ, նրանք, ովքեր հավատացել են. Խոնարհվեք, գետին տարածվեք, երկրպագեք ձեր Աստծուն և բարիք գործեք, միգուցե դուք հաջողակ լինեք: Եվ ջանացեք հանուն Ալլահի պատշաճ կերպով: Նա ընտրել է ձեզ և ոչ մի դժվարություն չի դրել կրոնում: Այն ձեր հոր, Աբրահամի կրոնն է: Ալլահը կոչեց ձեզ «Մուսուլմաններ» մինչ այդ և այստեղ, Ղուրանում, որպեսզի մարգարեն լինի ձեր վկան, իսկ դուք մարդկանց: Այսպիսով ադոքեք և տվեք Ջաքյաթ և պահեք պահեք հանուն Ալլահի: Նա ձեր պաշտպանն է և բարձրյալ է Պաշտպանը և բարձրյալ է Օգնականը : »**  
(Ալ-Հաջ : 77-78)

Դուք անկասկած, ամենադաժան թշնամուն կգտնեք հավատացյալ հրեաների և բազմաստվածների մեջ: Եվ, նույնպես կգտնեք հավատացյալներին սիրող նրանց մեջ, ովքեր ասում են. «Մենք քրիստոնյաներ ենք:» Այդ կկատարվի այն պատճառով, որ նրանց մեջ կան քահանաներ և վանականներ, ովքեր ամբարտավան չեն: Եվ, երբ նրանք լսեն Մարգարեյի լուսաբանումը, դու կտեսնես նրանց արցունքները, քանի որ նրանք ճանաչել են ճշմարտությունը : Նրանք ասում են. «**Մեր Տեր, մենք հավատացել ենք, այսպիսով գրառիր մեզ վկաների շարքերը: Եվ, ինչու՞ մենք չպետք է հավատանք Ալլահին**

և մեզ եկած ճշմարտությանը: Եվ, մենք ցանկանում ենք, որ մեր Տերը առաքինի մարդկանց հետ մեզ ընդունի Դրախտում:՝ Այսպիսով, Ալլահը պարգևատրում է նրանց, ասածների<sup>1</sup> համար, Դրախտի այգիներով, որի ստորոտում գետեր են հոսում, որտեղ նրանք հավերժ բնակություն կգտնեն: Եվ այս է բարիք գործողների պարգևը: Մակայն նրանք, ովքեր չեն հավատացել և մերժել են Մեր նշանները, Դժոխքի ընկերակիցներ են :» (Ալ- Մայիդահ:82-86)

Մենք պարբերաբար, հասցրել ենք նրանց խոսքը, Ղուրանը, որպեսզի նրանք կարողանան հիշել: Նրանք, ում Մենք մինչ այդ պարգևել ենք Գիրը<sup>2</sup>, հավատացել են: Եվ, երբ այն ընթերցում են նրանց, նրանք ասում են. «Մենք հավատացել ենք, իրոք, այն ճշմարտությունն է մեր Տիրոջից: Իրավամար, մենք նույնիսկ մինչ այդ, մուսուլմաններ ենք եղել, այսինքն, հնազանդվել ենք Ալլահին:» Նրանք կստանան իրենց պարգևը կրկնակի, քանի որ համբերատար են եղել և որովհետև փոխել են չարիքը բարիքի և տվել են այն պաշարից, որը Մենք ենք պարգևել: Եվ, երբ նրանք լսում են զրպարտություն, շրջվում են և ասում. «Մերն են մեր արարքները և ձերն

<sup>1</sup> Այսինքն, նրանց ճշմարտությունը և Ալլահի կրոնը ընդունելու համար:

<sup>2</sup> Այսինքն, նրանց միջի անկեղծ հավատացյալները:

են ձերը:Խաղաղություն լինի ձեզ<sup>1</sup>:Մենք չենք ցանկանում հետևել տգետների ուղղուն:»» (Ալ-Կասաս:51-55)

«Եվ,անշուշտ, Գրեթի Մարդկանց մեջ կան այնպիսիներ, ովքեր հնազանդորեն հավատացել են Ալլահին և այն բանին, ինչ նա լուսաբանել է ձեզ և նրանց:Նրանք չեն փոխանակում Ալլահի տարբերակները չնչին արժեքով:Նրանք կունենան իրենց պարզև իրենց Տիրոջ հետ: Իրավմամբ,Ալլահը արագ է հաշվի մեջ:» (Այիլե Իմրան:199)

Այսպիսով,եթե նրանք վիճեն ձեզ հետ ասեք. «Ես հնազանդվել եմ Ալլահին, Իսլամում և այդպես են արել իմ հետևորդները:»

««Եվ հարցրու նրանց,ում տրվել է Գիր և ում չի տրվել<sup>2</sup> «Արդյո՞ք դուք հնազանդվել եք:» Եվ եթե նրանք հնազանդվեն Իսլամում, ապա նրանք առաջնորդվել են առաքինաբար,սակայն եթե նրանք շրջվեն,ապա քո պարտքն է միայն հիշեցնել:Եվ Ալլահը Տեսնում է Իր Օտառներին:»» (Այիլե Իմրան:20)

<sup>1</sup> Այս իսլամական ողջույն չէ՝ Խաղաղություն ձեզ:՝ Ավելի շուտ այն նշանակում է .՝ Դուք ապահով եք, մեզ ոչ վայել վերաբերմունքից:՝

<sup>2</sup> Նրանք, ովքեր չունեն գիր, այսինքն, բազմաստվածները:



[www.islamhouse.com](http://www.islamhouse.com)